



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արշակ Գալստյանը, Արամ Սարգսյանը, Լևոն Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Կարեն Հարությունյանը, Թելուշ Հովհաննիսյանը, Բաղդասար Թովմասյանը, Վարդան Հակոբյանը, Զոհրակ Հովհաննիսյանը, Զորիկ Տիգրանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N 10 արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղվարդ համայնքի Զովունի և Սարալանջ գյուղերի խմելու ջրագծերի կառուցման համար համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին:

2) Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73/

2.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի, համայնքի «Զովունու խմելու ջրագծի կառուցում» և «Սարալանջի խմելու ջրագծի կառուցում» ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ համաֆինանսավորում կատարելու համար՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

1. Եղվարդ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 5330.442 հազար դրամ:

2. Բյուջեի 6.3-1 ծրագրի 4657 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<5330.442>> թվով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

3.Լսեցին

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎՈՒՆԻ ԵՎ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1073-Ն որոշումը՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ <<Զովունու խմելու ջրագծի կառուցում>> և <<Սարալանջի խմելու ջրագծի կառուցում>> ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին անհրաժեշտ համաֆինանսավորում կատարելու համար 2019 թվականի բյուջեից 5330.442 հազար դրամ հատկացնելու վերաբերյալ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԱՎՐԵՆՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՍՐԱՊ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Handwritten signature

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Handwritten signature



Նիստին արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը

Handwritten signature